

ՆՈՐՈՐ

Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՐՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԳՈՐԴՐՈՒԹԻՒՆ

ԿՅՒՅՏՈՒ

ՂՐԷ. ՈՂՉ

Table with subscription rates: Գանձիւրի համար տարեկան 50, Գանձիւրի վեց ամսեայ 30, Երջակայից տարեկան 60, Երջակայից վեց ամսեայ 35.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՇԱՐԱԹ

Table with subscription rates for Artstasmuni Sharap: Տարեկան 18, Վեցամսեայ 10.

ՈՒՍՈՒՅՑ ԵՒ ԿՈՎՈՍԹԻ ՇԱՐԱԹ

Table with subscription rates for Ousost and Kovost Sharap: Տարեկան 7, Վեցամսեայ 4.

ԲԱԺԱՆՈՐԳՈՐԴՐՈՒԹԻՒՆ ԿՅՒՅՏՈՒ ԵՒ ԹՂՐԱՍԱՐԻ ՇԱՐԱԹ

ԹԵՐԻՔԻՆ ՎԱՐՇՆԱՔԻՆԱՆ ՎՐԱՅ Կ

ՎԱՐՁՈՒԹԻՒՆ ԿՆՈՐ ՕՐԻՒ

ՆԱՄԱՆ ԿԱՐ ՈՒՄԷ ԲՂՐԱՍԱՐԻՔԻՆ

ԳԵՏԻ ԵՒ ՈՒՂՆԱԼ ԱՌ

Վարչութիւն ՆՈՐ ՕՐ լրագրի ԳԱՀԻՐԷ

Direction du journal

NOR-OR

Caire

Չեւապիքներն եւ չեն գործարար

ԱՐՏՈՍԱՏԻՐ ԵՒ ՄԻՆԻՍԷ

ՇԱՐԱԹ ՅՈՒՆ. 20/2 ՓԵՏՐՎԱՐ 1901

ՔԱՆՔ ՓԱՐԱՅ ՈՂՁ

Ա. ՏԱՐԻ ԹԻՒ 64

Փաստաբան Տ. Խոսրով Զոհրապ հետեւեալ շահեկան յօդուածն զրկած է խմբագրականն, խոստանալով նաև իր գրական աշխատակցութիւնն որ այնքան թանկագին է «Նոր-Օր»ի համար:

ՕՍՄԱՆՅԻՆԵՐՈՒ ԾԱԳՈՒՍԸ ԵՒ ԻՍԼԱՄՈՒԹԻՒՆԸ

Քրիստոսի 1224 թուականին, Սիւլէյման 130,000 հոգիներու զուլա անցած խորասանը թողուցած էր զաւ Երիզայի և Ախլաթի մտերը հաստատելու համար, բայց Մանկուեան արշաւանքին ետ մղուելով ստիպուած էր Երիզայ Եփրատի շրջակայքը:

Սիւլէյման սակայն չի կրցաւ շատ յառաջ ելնել, գետին անցած պահուն խեղդուեցաւ և իր խեղդուած տեղին Քիւրտ-Մեզարը անուն տրուեցաւ:

Սիւլէյմանի մահուան վերջը իրեն հետեղ բողոք թափառիկ հրոսախումբերը սկսան հետզհետէ ցրուել, մինչև իսկ իր զաւակները իրարմէ բաժնուեցան: Զաւակներէն երկուքը թորասանի ճամբով հայրենիք վերադարձան, իսկ միւս երկուքը Տէնտոր և Էրթորու իրենց հետիններովը հաստատուեցան Էրզրումի արևմտեան կողմը:

Օրին մէկը, Էրթորուի հրոսախումբը ստիպուած ելաւ այն տեղէն զնաց դէպ ի Արևմտքի Սելւոզեանց Սուլթան Ալաէտինի օգնութիւնը հայցելու համար:

Կը պատմեն թէ՛ երբ Էրթորու գետի մը հարիւր հեծելագործներու զըլաթը շրջան մը գագաթը Պիստու, նըլ-միջոցն որ հոն դաշտին մէջ խամբ մը մարդիկներ իրարու խառնուած կը կռուէին: Էրթորու օգնութեան հասաւ անգործներուն և ցարթութիւնը ասանք տարին: Զուգակցութեամբ

Էրթորուի օգնած մարդիկները նոյն ինքն Սուլթան Ալաէտինի խումբին պատկանող մարդիկներէն էին որոնք Մանկուեանը դէմ կը պատերազմէին: Սիւլէյմանից Սուլթանը ի նշան երախտագիտութեան Էրթորուի նըլուէր տուաւ թոմսանիճի, Էրթորուի լեռները և Սելսիլատի դաշտը:

Այդ օրէն սկսեալ Էրթորուի հըրոսախումբերը սկսան հոն հաստատուել, և գրացի յոյները կողոպտելով հարստացուցին Էրթորուի գանձը: 1288ին մեռաւ Էրթորուի և իր տեղը յաջորդեց Օսման ուրիշ սերնդան Օսմանցիները:

Ահա այսօրան խոնարհ սկսած է որորանը բովանդակ ժողովրդեան մը որ աչքաբարձի կարևորագոյն մէկ մասին պիտի տիրէ եղբր այսօր:

Օսման և իր մարդիկները Հեթանոս էին: Իր հօրը մահուան վերջը՝ երիտասարդ Օսման երբեմն երբեմն իթպուրնու (Իսկիշէհերի մետ) կ'երթար այցելութիւն տալու Շէյխ Էտեպալի անուն մահաբաւականի մը:

Շէյխ Էտեպալի գեղանի աղջիկ մ'ունէր, Մալխաթուն անուն մը որուն կը սերահարի Օսման: Բայց հակառակ իր ջերմագին թախանձանայ Շէյխ Էտեպալի կը մերժէ իր աղջիկը Օսմանին տալ, նկատելով որ դեռ շատ պզտիկ էր:

Օսման միջոց մը կը խորհի: Շէյխին պիտի համարուէր որ օգտուելով կը հնարէ նուրբ խաղ մը: Առաւօտ մը կանաւա յուզեալ կերպարանքով մը Շէյխ Էտեպալիի քով կը վազէ, պատմելու համար կարծեցեալ երազ մը զոր իբր թէ գիշերը տեսեր է: Երազ տեսայ, կ'ըսէ Օսման՝ որ չէջիին ծոցէն լուսին մը ելաւ և մտաւ իմ ֆոքս: սա անհագին ծառ մը բուսցուց թմ փորիս մէջ, որուն ոտները ծով ու դամաք կը ծածկէին: իսկ ծառին արմատներէն Տիգրիս, Եփրատ, Նեղոս մարդկութեան ամենամեծ գետերը կը հոսէին:

Քանի մը փչեց յանկարծ, և ծառին տերևները՝ սրածայր՝ գարձուց դէպի կէտ մը որ չափիւղեայ և զմրոխտեայ օդակի մը կը նմանէր: Քաղաքի մը կերպարանքը ունէր այն: Եւ հաղիւթ մտտիս պիտի անցունէի զայն, մէկէն ի մէկ արժնայ:

Խաղը յաջողած էր: Մնապաշտ մահաբաւականը հաւատաց ասոր, և աղջիկը անոր տուաւ: Օսման և իր ժողովուրդը Մահաբաւականութիւնն ընդունեցան:

Ու այս թախաբաւականները, այդ նոր կրօնով նոր ազգութիւն մը կազմեցին, և իրենց պէս մահաբաւականութիւն ընդունող ամեն թուրք ազատ էր իրենց խմբին մէջ մտնելու: Շատ մը Յոյներ, Սլուսներ, Ալպանացիներ, Ռուսներ, Մահարներ, Օսման, լիներու սուրին տակ Մահաբաւականութիւն ընդունեցին:

Ըստ նշանաւոր հեղինակաց, եթէ Օսման չ'ընդունէր իսլամութիւնը, մինչև հիմա շատուց կորուսած կ'ըլլար արդէն այն:

Օսմանիներուն բերած, այդ նոր զորեղ մտիւնանդութիւնը և անոնց բանակներու մէջ եղած կարգ ու կանոնը 300 տարիներ յետաձգեցին այն քաջական անկումը, որուն մէջ կը գրանուին այսօր:

Օսմանի Մահաբաւականութիւնն ընդունելը անհամար հետեանքներ ունեցաւ պատմութեան համար:

Նկատողութեան առնելու արժանի բան մ'է ասիկա որ կը հաստատէ թէ իսլամին բազմը կ'ընէ մը սերէն կախում ունեցաւ:

Չէ միտրազգի մը ճակատագիրը անանկ բաներէ կապուած կըլլայ յաճախ:

Խ. ՉՈՀՐԱԳ

ԱՆՈՆՑ ԲԱՐՈՑԱԿԱՆԸ

Օր մը Պատոն Ալֆոնս Եր Ռիչլիտ Սարսիկ հետ խօսակցութեան մը միջոցին՝

— Յրանալի մէջ, սիրելի վարպետ, մարդիկ երբու պատկարգի կը բաժնուին, ըսած է, հարուստները և պարկեշտները: Որքան որ Ռիչլիտ մը չեմ և ոչ ալ Ալֆոնս մը կուզեմ ըլլալ, ոտկայն, կարծեմ թէ չպիտի մեղադրուիմ եթէ ես ալ հայերը երկու գասակարգի բաժնեմ ինչպէս ջրած է Ֆրանսոցիներուն համար՝ հրեաներուն թագաւորը որ միեւնոյն տանն թաղուսներուն ու կրեան է:

Ես իմ կարծ խելքով կը կարծեմ թէ երկու տեսակ Հայ կայ, եթէ ոչ աշխարհիս վրայ, գոնէ Պոլսոյ մէջ:

Ա. ՉՈՀԵՐԸ
Բ. Բարոյական անեցող մարդիկ:

Այս վերջինները իրենց նմանները ունին տիեզերքի ամեն կողմերը. իսկ Չոչը՝ Աստուած միայն և միմիայն Պոլսոյ համար ըստեղծած է ինչպէս Եւաթ-գուլէի մարտը և Արմավուս գետի ելակը:

Պոլսոցի Չոչին համար պարկեշտ մարդ է հազար ոսկի անեցողը, օրինակելի կը դառնայ այն մարդը որ հինգ հազար ոսկի ունի, քսան հազարի հասնելուն պէս ալ բուլիք չի մար բայց երբ յիսուն հազարը կանցնի, ո՛հ, այն ատեն, ալ պորպուպէս ինկարկելի սուրբ մըն է:

Անոնց համար բարոյական վարժապետներու, վաճառատան գրադիւրներու և իւլագիթաճիւրներու յատուկ առաքիւնութիւն մընէ որմէ կրնան գերծ ըլլալ ամեն անոնք որ կամ Մանչիթըրէն մանած բերել կուտան և կամ Եւրոպայ կը գրկեն Աւերիկա:

Իրենց համար բարոյական զուրկ սրկիւլ մըն է այն երիտասարդը որ հինգ հարիւր ոսկի իսկ չունենալով, կը համարակի զոյգ մը փազաբուշ խօսքեր սպրդեցնել գեղեցիկ կնկան մը առջին ի վար, բայց իրենք՝ քովերին ի պահ դրուած օրբերու դրամը կը կըլլեն և ասոր փոխարէն կը պահանջեն որ Շիւլի գերեզմանատան խնամակալ և կամ Տնտեսական խորհրդոյ անգամ կարգուին Ազիւուալուֆ տիտղոսով:

Նպատակաւ՝ Տէրաթի ոճով բարոյականին ինչ ըլլալը բացատրել չէ, և ոչ ալ կըլլաւ ամբողջ շարքը այն ամեն շոշոքուն որոնց իմաստութիւնը Չաքաճըրարէն կակի թաղական խորհրդարանի մը մէջ վերջանալու համար:

Նոյն իսկ Պարունեան անոնց հալսէն չէ եկած. ալ երկակայեցէք . . .

Անցեալները՝ Չիպայի վրայ դրած միջոցս, միտքս եկաւ միջադէպ մը որ այդ շոշոքուն մէկուն և իմ միջև տեղի անեցած է ասիկց քանի մը տարի առաջ: Ասոր համարու պատմութիւնն ընկելով հոս՝ կարծեմ պիտի կրնամ խիստ յոտակ գողափար մը տալ անոնց բարոյականին և մտածելու և զանուկին վրայ:

Ամեն բանէ առաջ պէտք է յայտարարեմ թէ պատմութեանս մէջ յերիւրուած և ոչ իսկ բառ մը կայ, ծայրէ ի ծայր ճշմարտութիւն մըն է որուն կը ինքրեմ հաստատաք:

1893 ին շարաթաթերթ «Մասիս» քին մէջ ներառելով մը հրատարակած էի «Յաճի» վերնագրով, ասիկա անէքթա Պէր դերամասայ կնկան մը կեանքն է:

Այդ հրատարակութիւն վեց կամ եօթը օր վերջը, շարաթ իրիւրուն մը, այս օրուան պէս միաքա է, Պոլսոյ Հ. . . խանէ կանցնելի է, երբ իր ճարտարութեամբը

և հարստութեամբ հոգևոր մանիֆակտուրայի վաճառական մը իր դրամներով հարստութեան գիտեցողութեան սուրճը մտանքն առնելու:

Մերեկու պատճառ մը չունի, հետևաբար իր դրամներին ճիշդ պիտանք ամօթի մը վրայ նստայ:

Քաղաքավարական բանի մը խօսքեր փոխանակներն են:

— . . . Ճանկի կարգացի, ըստ մանիֆակտուրանի, էյ, ու՛րիւս, իրաւ որ շատ սքանչելի կերպով կրճատուէր մանաւանդ ննջանեակին մասը՝ չէս գիտեր որքան հասնեցայ, դուն ա՛յ զհնաւորն պիտի լինի ըրեր, էյ աչկ օշտուն առ ամեն ազէկ, ըսելիք չի կայ. բայց օղորտ, մեղքը չէ թո՛ւ այդ արտօնի խնդրի որ ասանկ խնդու խնդու բաներու կը դրժածես. կնիկներուն փէշը սանկ, բորսէն նանկ, ոտքերը պղտիկ, չեմ գիտեր ինչը մեծ է եղեր. էյ եսքը, ասոնց մէջ ոչ բարոյական կայ և ոչ ալ իմաստասիրական, իբրև մարդ կարգայ նէ, ի՛նչը կուզայ և լաճելի մը կըսէ, բայց օղորտ, չէ, օղորտ, վազ անցիր, նայէ ի՛նչ օղտակար ազգաշէն, բարոյական բաներ դրես: Ինչ հասկցայ, երբ «Ցանին» կը կարգաւ, կը հիշանամ, կը հանիմ, բայց չեմ կըրնար սուն առնելով կնկանս կամ ազնկներուն տալ որ կարգայ, վերջապէս բարոյական ըստած բան մը կայ, օղորտ օղորտ գրուածներ խօշաղղիւսով տունէն ներս չենք խօթեր. ամօթն զատ մեղք ալ ունի, չէ՞ մի: Եւ յետոյ, խաչո, ես թեղ կը սիրեմ. եկուր ինծի մտիկ ըրէ, ասանկ զէլզէկ բաներ դրեմ վազ սնցիր: Ցանի, մանի մարդու փորը չիշտաց ներ, բարոյականին նա յինք: Քանի որ ասանկ յարմարութիւն ունիս, փոխանակ նորապէս է, ինչ խաւուս խաւուս է դրեալ, վաճառականութեան վերայ, աշխարհագրութեան վրայ գրէ, աստուածարանութեան վրայ գրէ, անտեսալիտութեան վրայ գրէ, ես ինչ գիտեմ, ի՛շտ ասանկ բաներու վրայ գրէ որ մարդ օգտուի, բան սորվի. կը հասկնամ. «Թայմը» չէ նայէ, ասանկ նորապէս պէս բաներ կը գնէ: Մեղք էր, մեղք էր, Չօհրայն է եղեր, Լանն է եղեր, դուն ես եղեր, գրիչը ձեռքդ պահելու պէս, մուրջնիւր ըզրօթեալ նուրբն, սիրաբանութիւն կը ըզրօթէր. ի՛նչո միտքի բաներ, վազ անցիր, անտար, կարգացողները միտակ մեղք չենք, անդին յօշոտիս յօշոտիս աշայիւն կայ, արիւնի կը մանաք կըր. մանուսով լեռուն մեղք չէ. ֆէլէնանէն, օրինակ ասէր, օր մը տեսեր ես որ արխաւսը վրան բայ իսն գրէ. շիտակը ըսելու է, ի՛շտ գրազու ես անտար կը սեմ, մարդը ամեն բան խապար ունի, մարդ անտար գրածները կարդայ նէ, բան կը սորվի:

Իրաւ, ես թեղի պէս խնդրեցի չեմ, բայց ըստ իրաւունք չէ. Շախաւսի մէկ քարաւ, օղորտ, խօսքը մտիկ ըրէ, վազ անցիր այդ ճամբայն, ես թեղի Մանլոթըրէն գերբեր բերիւ տամ, կարդա նայէ, անկէց ետքը դուն միտակ պիտի մեղայի գաս և ըսածիս պէս պիտանի բաներ պիտի գրես: Մեր ազգին համար էյ ճեմիւն ըլլալու վիտիքը չէ. շորս կողմէ մէյ մը նայէ, մենք ուսմունքի պէտք ունինք, ուսմունքի, մեր գաւալները կը թռնան կարգու են, ուսմունք, երկ, մերգ, ան մէյ. վիտիք էր, դրոյի նայիք հիմայ. անտար, սա ուսնալցնները օրինակ ասէր, մարդերը նայէ նստըլ առաջ կը թան կըր. էյ ճեմիւն վիտիքը անցաւ, առաջ կը թանք, կրօնիկ, ազգերինս պահենք, դուք նորապէսիս ծայրը բաներ կայնեք, էյ, ինծի նայէ, անդին երգայինները առաջ կը թան կըր, մեղք է, մեղք է, սէրիւ բաներու նայինք,

չարս ու կէտին ճամբան գիտե՛ս՝ աս ազգը մարդ ընելու է, «Ցանին» ալ մարդ չըլլար: Հայտէ օղորտ, սուն վարորին անճախ կը հանինք, ըսածներուն վրայ ազէկ մը մտածէ, թեղ նայի՛մ, հա՛:

Ինչ մնաց պիտի լայի:

Գիրքն էլլալէս ի վեր ատանկ շանքարոյ լամձ չունի, և ասոր համար էր որ այդ մարդուն խօսքերը խորին սպաւորութիւն մը թողոյցին վրաս, սպաւորութիւն մը սրուն մէջ դրժումը և լաւագոյն բան մը ըլլալու տրամադրութիւնն ամենէն լայն տեսիլ կը գրուէին:

Գիշերն ամբողջ բունս չի տարաւ, խղճի խայթի պէս բաներ կզգային ներսիցս, փոթորիկ կար դանկի տակ, անհանգիստ էի:

— Ո՞րքոր՞ մըն եմ, կըսէի ես ինծի, այդ մարդը իբրև ունի, այո՛ւ, անշուշտ ամեն զաւելի տէր մարդիկ անտար պէս կը մտածեն. ձգել մէկ կողմ ինչ որ ճշմարիտ է, բարի և զեղեցիկ, մտնալ բարոյականը, անտեսել պատշաճը, զայն կողմէ զգայնութիւններ ներարկել թարմ, մաքուր սրտերու մէջ, թունդ հանել խեղճ ազնկներու անմեղակ երեակայութիւնը, պատանիներու ներշնչել սիրոյ պիտի չհամար, պարհեշտ կիններու տալ հեշտանքին դաշտաբար, միթէ ալ ամենը փնտրակար ուղղութիւն մը չէ՞ որու կը հետևինք: Մանկավարդու՛մի կամ ոչ, այդ մարդն ալ վերջապէս, իրրե ընտանիքի և փորձառութեան տէր մէկը, անտարակոյս ինձմէ լաւ գիտէ դանազանը շարք բարիքն, սպեղը գեղեցիկն և օգտակարը փնտրակարը: Եւ ինչն գիտեմ թէ այս մարդը չի ներկայացնէր թիւրեմանդիտակցաբար, ամբողջութիւնը ազնուագոյն և պատուական հայեցում:

Աս դաս մըն է ինծի համար որուն վերայ կարծէ սասն ազգամ անդրադարձում: Դեմ ժամանակ ունիմ մտածելու, հիմայ աշխատինք բնանալ:

Եւ ըսածիս պէս ալ ըրի, դառնի եկող քրիստոնեայի մը պէս, անպիբերին անտար հիանալի մը նման, աչքերս զոցեցի և արդարաց բունով բնացայ մինչև կիրակի կէս օրին:

Երկուշաբթի առտու ես՝ ալ առաջուան Ալիիալը չէի, ի բաց վանեցի յինքն մտածելու, զգալու, տեսնելու նախկին եղանակս, օգտակար, պիտանի ըլլալու ահագին փափաք մը, տեսնել մը, մարմնով մը պաշարեց համակ կռիւնս. նոր ոյժերով, սորր, ազնիւ զգացումներով զինուած շոգնուս մտայ «Արեւել»ի տարածելը կը թալու համար:

Գրականիս մէջ «Ցնե տը սիւր» թիւ մը, Բզանթոֆի վերջին հաւարածն և իվէթ կիրակի մատակերը կար, ամենքն ալ կատաղօրէն պատրելով, ծովը նետեցի, պատուիբերով ես ինծի անգամ մը ես ատանկ բաներու գրամ չի տալ:

Կամարջ հասնելուս պէս շունչս ուղղակի Պարիսի գրատունը առի, և հետզհետէ զընցի հետեակ հատորները:

Կենսապատու արդու կասարինէնայ, Պարկեշտ ֆաղաֆաղին, ճարտիֆ սիսեուագիտութեան, Վարֆ արտոյ, «Վայ ինձ» Մրմարեանի խալի ճառ, Յաղագս պարսաւանաւարութեան, Սաղիւսակաւ արձագանք, ժրնարիւթի, Թոնվուս աղբոր սնակը, Կիրակիեր և Օրհնարիւն արտոյ Մանիսիս:

Այս ամեն սրբութիւնները բնակարի մը յանձնելով քայլերս դառնօցի վերջ Ղալաթիս:

Կամարջին վրայ արգէն երկրորդ օրուան

տալիք յօդուածս յղացած և գրեթէ կէսը պատրաստած էի մարէս: Յօդուածիս վերնագիրը պիտի ըլլար «Լուսորդ» վերապին մէջ»

Այս բրիտանականի և առաքինի տրամադրութիւններով հասայ Ֆիլիպի ճաշարանին առջև:

Բնակարիս զրկեցի Նորատուկեան խանը և ես մտայ ճաշարանն ներս

— Ուր ես ծօ՛, ըսաւ Ա. Մ. բարեկամս որ այդ միջոցին հաւի մը զիտալ կրճելու վրայ էր, երկէ ամբողջ թեղ փնտրեցի, հոգիս ելաւ, ո՞ր ծանկ իր:

— Ինչ կայ, իւր ըլլայ:

— Նիւթ մը ունիմ, նիւթ մը ունիմ ի՛նչ, աւարցի կէօրէ բան է:

— Բու՛ տեսներ:

— Երկէ Պետրի Տերը ըլլալու էր:

— Պարզեաբար խոսքիս կար:

— Ինչ պարզեաբար խոսքիս, ինչն ես ծօ՛, խրեալս սխալմայ մը եղաւ . . .

— Իր գուշակիմ տիկին Ե. . . անպատճառ պիտի թէ՛նք ինչաւ:

— Այդ ալ բան է:

— Երկան ըրեր, ըսէ նայինք:

— Ես . . . հանը կը ճանչնամ:

— Ինչպէս չէ:

Ես . . . ետեւ շաբաթ իրիկուան խրատու մանիֆակտուրանէ կը:

— Ես, չիտես ինչ խալթ է ըրեր:

— Անպատճառ լուսարարին հետ կոխ ըրած ըլլալու է, զրաւ կը դիմ:

— Ես, ինչ լուսարար, ինչն, ես կայնէ որ պատեմ: Ես . . . հանին քեան ալ կը ճանչնաս անշուշտ:

— Արուեսակը:

— Հա՛, երկէ Առուեսակին չէր:

— Կարճեմ:

— Ի՞շտ Արուեսակը՝ ըրողը անունն է Տէյի. Ես . . . ես կուզայ շաբաթ իրիկուրնէ: Առտուն միջոց մը, Արուեսակը ֆիլիպը գտնուած պահուն, մեր Ես . . . հանը գիշերագոյնստով կը մտնէ ֆիլիպը ներս և գտնուէր ռիւրկիւն փնտրուն պէս, կը հարցակի Արուեսակին վրայ . . . ինչպէս արագակի Արուեսակին վրայ . . . ինչպէս արագակի հաւերուն վրայ: Արուեսակին ըսեմ, ինչ շայն ունի նէ կը պտայ, Ես . . . հանի կինը՝ աղջիկները, — վեր կըսի կայ — ընելով խմբովին վեր կը վազեն, իրողութիւնը մէջ տեղ կենէ, ալ կոխ մտնիկ ըրէ դուն, տուն գրացի ամենքն ալ փողոց կը վազն, պուսակներ, կանչներ, որքան կրնաս զոչուկել, կէս ժամ ետք ինչոքը քարտըս եղած էր:

Այս առտու շոգնուան մէջ չէս գիտեր որքան ինչացեր ենք. Ալիալունը գիշերը ստանաւ որ մընալ շիներ է, անանկ շիր բան չըլլար:

Ֆիլիպի առաստաղը դիտուս պիտի փշէր: Ես . . . հանը հէ՛, խնդրեայի պիտի, հաստացե՛ք:

Վայ, շունչանորով մարդ, շաբաթ իրիկուն, ինծի ատանկ շան ըսող կարգալ, «Մասիս» ը կամչնայ եղեր տուն տանիլ, «Ցանին» անբարոյական վկայ մեկ եղեր, աստուածարանութիւն հոս, անտեսագիտութիւն հոս, Հայ երիտասարդութիւնը տանկ, աղին օգուտը նանկ, Թայմը, Մանլոթըր, ֆէլէնան, անկիւսիցները, յառաջադիմութիւն, կրօնք, ուսմունք, զատուարարութիւն, օգտաշատ գործեր, ո՞ր մէկը յիշեմ, և այս ամենը ըսելէն տանեիկու ծամ ետքը, իր տանը մէջ, գրեթէ կրողը ըրին տակ և աղջիկներուն աչքին առջև պաշտօնը . . . հէ՛ . . .

Վայ Ես . . . հան վայ, ասանկ հէ՛: Չի բարոյականը աս է եղեր . . . ես ստորվրայ կը նստիմ, նա՛:

Յ. ԱՎՓԻԱՐ

ՔԱՆԱՍՈՒՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Վերջորիս Թագուհոյն գահակալութենէն ի վեր (40) բառասուն պատերազմ ունեցեր են Անգլիացիք. ասանկն ժամանակարարական կարգը:

1838. — Թագուհոյն գահակալութեան տարին — Անգլիոյն հետ պատերազմը:

1839. — Չինաստանի պատերազմին ընկերակալութիւնը:

1841. — Անգլիացոց ֆապուլի (Անգլո-նիստանի մայրաքաղաքը) դրամը:

1842. — Չինաստանի պատերազմին վերջանալը: Անգլիացոց երկրորդ անգամ ֆապուլը գրաւելը (Անգլիական բանակը երբ ֆապուլէն կը վերագանար, ֆիպուլի կիրճերու նմէ կորուեցաւ):

1843. — Պատերազմ Հարաւային Արիւրիկէի մէջ և Նաթալի Անգլիոյ միացումը:

1844. — Բիրթ նաւահանգիստին պաշտարմը:

1845. — Սիբիերու (Հնդկաստանի մէջ) պատերազմը:

1849. — Պատերազմ Հնդկաստանի մէջ և Բենգալի միացումը:

1851. — Պատերազմ Պիլիպիններուն հետ:

1854. — Բիրթի պատերազմը:

1855. — Բիրթի պատերազմին վերջանալը:

1856. — Պատերազմ Չինաստանի հետ: Ռեկթի Անգլիոյ միացումը:

1857. — Յիւստինիանոսի Հնդկաստանի մէջ Անգլիացոց կատարումը:

1862. — Պարսից Անգլիոյ միացումը:

1867. — Պատերազմ Ալիսիոյ հետ:

1868. — Ալիսիոյ մէջ Մակաուայ ամբարաններու առումը և այդ պատերազմին վերջանալը:

1871. — Պատերազմ Հարաւային Արիւրիկէի մէջ, և կրեքայնտի Անգլիոյ միացումը:

1873. — Պատերազմ Ալանդներու հետ (Ալանդները Համալսի քաղաքի բնակիչներն (սեյն) Երկրին մայրաքաղաքն է ֆրանսիայ: Արեւոյ ճակատութիւնը իրեք միլիոն կը հաշուու: Ալանդները՝ Երկրացոց սուկի փոշի, և փողոց կը ծախեն):

1874. — Քուստամուլի (Ալանդի մայրաքաղաքը) առումը, և յիշեալ պատերազմին վերջանալը. Այս Թուականին հիմնեցին հոն անգլիացիք զաղթականութիւն մը առուն:

1878. — Պատերազմ Անգլո-նիստանի հետ:

1879. — » » Չուլիներուն հետ:

1880. — Անգլո-նիստանի պատերազմին վերջանալը:

1884. — Թրանսիպի առաջին պատերազմը:

1882. — Երկրորդ արաւանքն ու Արաւանքի պատերազմը:

1884. — Սուտանի պատերազմը:

1885. — Պերսիական Անգլիոյ հետ միացումը, և Պատերազմ Պիլիպինայի հետ:

1886. — Չուլուանտի և վերին Ռուսիոյ Անգլիոյ հետ միացումը:

1890. — Պատերազմ Հարաւային Արիւրիկէի մէջ. Մանլոթըրի և Մաղապէլանտի Անգլիոյ հետ միացումը:

1895. — Չիրալի պատերազմը:

1896. — Սուտանի պատերազմը:

1897.— Աֆրիկեաներու պատերազմը:
1899.— Թրանսվալի եկրորդ պատե-
րազմը:
1900. — Չինաստանի պատերազմը:
Կամպիոն Արքայազնը:
Սոմալիներու արշաւանքը: Հնդկաս-
տանի մէջ յեղափոխութիւն և Ռապի-
տներու պատերազմը:

ՆՈՒՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Մենքեան և տոն օրերու առթիւ
այցելութիւններ ընելու և կամ՝ այցա-
քարտ շրկելու պարտականութենէ
զերծ մնալու համար Տեառք Գ. Լե-
քսէնեան և Ս. Կատիթեան 50 ական
զըուշ շրկած են քաղաքիս Աղբատա-
խնամ ընկերութեան:

Աւստի օրինակելի նորութիւն մը
որ, տարակոյս չունինք, շատ մը հե-
տեւորներ պիտի սնենայ այսուհետեւ:

ՅՐԱԻՐ

ԱՆԴԱՄՍ

ՎԱՄՊՈՒՐԱՎԱՆԻ ՈՐԲԱՆՍԱՄ
ԸՆԿՆՈՒԹԵԱՄ

Ընկերութեանս ընդհանուր ժողո-
վոյ տարեկան նիստը տեղի պիտի
ունենայ յառաջիկայ կիրակէ 3փետր.
կէս օրէ վերջ ժամը ին, ընդ նա-
խագ. Գեր. Ս. առաջնորդ հօր ազգ.
Առաջնորդարանի սրահը:

ՕՐԱԿԱՐԳ

- 1. Ընթերցումն նախորդ նստի առե-
նագրութեան.
2. Ընթերցումն տարեկան տեղե-
կագրի և հաշուեկշիւի Գործադիր
Ժողովոյ.
3. Վերաքննութիւն կանոնագրու-
թեան.
4. Նոր ընտրութիւն Ընդհ. ժողո-
վոյ զիւանին.
5. Նորընտրութիւն Գործ. Ժողովոյ.
Կը ինքզինք, Տէր, որ բարեհա-
ճիք ներկայ գտնուի սոյն կարեւոր
նստին և կառարել Ձեր ընկերասի-
րական պարտականութիւնը:

Ընդհանուր ժողովոյ
Ատենադպիր Ատենապետ
Թ. ՍԷԹԵԱՆ Մ. ԱՆԱՆԵԱՆԹ

Ծանօթ. Ամէն ազգային ազատ է
սոյն նստին ներկայ գտնուի:

Գահիրէ 30 Յունվար 1904

...Վարչութիւն «Նոր-Օր» Լրագրոյ
Անգլիոյ Թագուհւոյն մահուան առ-
թիւ Ընկերութիւնս Ն. Վ. Սիրտարի
ուղղեց հետեւեալ հեռագիրը, Անգլի-
երէն լեզուաւ, որուն թարգմանուած
օրինակը կը շրկենք Պատ. Վարչու-
թեանդ խնդրելով որ հաճիք զայն
հիշուկալի հանրօգտաւ օճականիդ մէջ:
Սէր Բէճինըւտ Ուինիէթ, Սիրտար,
Խարթում
Թանուն Գահիրէի Հայոց Որբասի-
րաց ընկերութեան՝ կը փութամ Ձեր
վստմութեան մատուցանել մեր ամե-
նախորին ցուակցութեան անկեղծ և
յարգալիր հաւաստին, գաւնադէտ
սուգին որով առթիւ համակուած է
այս պահուս Բրիտանական ազգը:
Տիեզեր հանուր, այսպիսի անողորմ
կորուստով, զրկուեցաւ տարիներով
ու փառքով պղակապարդ Թագուհիէն՝
մինչ աշխարհի անբաղդներ, աղքատ-
ներ, այրիններ ու որբերը կուլան մա-
հը յաւէտ ողբացեալ առաքինասեր
Մօր մը:
Մէշտ օրհնեալ ըլլայ յիշատակը
Անոր:

Պատասխան.
Cairo, 29 January 1901
President Society «Vocpassirata»
Arakel Berberian,
Cairo

I thank you for your thoughtful
condolences on the death of the
Queen and I have transmitted an
expression of respectful sympaty to
the members of the Royal Family.

WINGATE

Ատենապետ Որբասիրաց ընկերու-
թեան Առաքել Պէրպէրեան

Գահիրէ

Շնորհակալութիւն Ձեր ցուակցու-
ցութեան իմաստալից հեռագրին հա-
մար, Թագուհւոյն մահուան, առթիւ և
արդէն հարողած եմ յարգալիր վըշ-
տակցութեան մ'արտայայտումը Նորին
կայսերական գերդաստանի անդամ,
ներուն:

Ի դիմաց Գործ. Ժողովոյ
Վ. Ատենադպիր Ատենապետ
Կ. ԵՐԶԵՆԿԱՅԵԱՆ Ա. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ԱՐՏԱՐԱՅ ԿԱԳՐԻ ԵՔԵՂ
ՆԵՐԿԱՅԱՏՈՒՄ

Յառաջիկայ ուրբաթ, փետր. 28ին, Շա-
րա-Ապա-Կ-Ազիզ եղիպտական Թատրոնի
մէջ առաջին անգամ ըլլալով պիտի ներ-
կայացուի Թրանսիլի մեծ բանաստեղծ՝ Վիք-
թոր Հիւկոյի ԼՈՒՔՐԷՑԻՍ ՊՈՐՃԻՍ շորս
արար և մէկ սպուկեր Թատրոնի թիւրք. կար-
գալորութեամբ Պ. Ֆաստիւրանեանի, ի նպատ-
Տիկին Պերճիկ Մաղապանեան, թատերե-
րգական ղերաօսանուհւոյն:
Կը յուսանք թէ Տեղւոյս Հայ հասա-
րակութիւնը պիտի փութայ քաջալիկ սոյն
հետաքրքրական ներկայացումը:
ՍՈՎՈՐԱԿԱՆ ԳԻՆԵՐ
Տամակները կը ծախուին, ծխալածառ
Տ. Կ. Երզնկացեանի խանութը, Ի Շարա-
Ապա-Կ-Ազիզ:

ՎԵՌՏԻ ՄԱՀԸ

Հեռագիրները Յունվար 27ին իտա-
լացի մեծ երաժիշտ Ճոզէպպէ Վեւ-
տի մահը գուժեցին Միլանի մէջ:
Նշանաւոր ձերուներին մահուան սու-
ղը ամբողջ աշխարհի է, որովհետեւ մեծ
հանճար մ'էր ան, և իր այնքան ներ-
դաշնակ քնարը թրթռացողած է և
պիտի թրթռացնէ մարդկութեան
հոգին:
Վեաւի ծնած էր ի Միլան 1813
Հոկտեմբեր 9ին: Իր գրած Օբերաւն՝
«Ռայկերօ» իտալացուեցաւ 1839ին
Միլանի մէջ: Առաջին քայլին մէջ իսկ
յայտնութիւնը կատարեալ էր: Ունի
20—25 նշանաւոր Օբերաւներ, որոնցմէ
յիշատակենք այն լսողները միայն որ
ժանօթ են Հայ ժողովրդին:
Ժանկ Բարֆ (1845ին ի Միլան) Ար-
քիլա (1848 ի Վենետիկ): Մալպէր
(1847 ի Յիւրթենյա), Տոլի-Ֆարջոս (1867
ի Բարիլ), Այնա (այս խաղին Օբե-
րան Եղիպտոսի խախ Իսմայիլ բաշայի
խնդրանքը գրեց Վեաւի որ ներկայ-
ացուեցաւ ի Գահիրէ 1882ի Ապտեմ-
բերին, և ապա ի Բարիլ 1876), Օթէլլո
(1887 փետր. 28ին, ի Միլան) և՛ ամե-
նէն վերջը՝ Մալպարա (1893) և այլն
և այլն:
Մեծ իտալացի մեծաւ՝ բազմաթե-
ղուն կեանք մը անցունեցէ վերջ՝ 87
տարեկան հասակին մէջ:

ՎԻՔԹՈՐԻՍ. ԹԱԳՈՒ ՀԻՆ

Ըստ «Պրակտիկ» Լրագրին, Սըրբըն-
էն քաջուած հեռագրի մը նախաձեռն-
ութեան շնորհիւ գործ կուտ մասին Վեհա-
պետուհին հետ ամենակրթիւն տեսնը-
ւողը Լորա Ռուբըրդը եղած է, որ
ճշգրիտ տեղեկութիւններ տուած է
անոր՝ Հարուսային Ափրիկէի արդի
կացութեան մասին: Ասոր վրայ իւր-
գուհին սիրտը տակնու վրայ եղած,
ու յաջորդ օրը՝ երեքշաբթի՝ յոգնու-
թիւն մը մ'ըզած էր չորեքշաբթի հի-
ւանդութիւնը յայտարարուեցաւ, ու
անկէ անդ ին Վեհապետուհին վիճա-
կը հետզհետէ սկսաւ ծանրանալ:
Թագուհին իր շուրջը գտնուողնե-
րուն միշտ կը կրկնէ եղեր լծէ այդ Պատե-
րազմը (Թրանսվալիան) իրեն մահ-
ուան պատճառ պիտի ըլլար:
Անցեալ աշուն, նմանապէս, շատ ծա-
ւեր կերպով հիւանդացած է եղեր Անգ-
լիոյ Վեհապետուհին, բայց չէր հրա-
պարակուած այդ լուրը: Այս անգամ,
սակայն, անխուսափելի էր մահը:

ԼՐԱՔԱՂ

ՀՅՅԱՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ ահեղապէս ծան-
րացած է, ինչպէս կը հեռագրուի եւրոպական
մամուլին: Ռիթերի գործակալութիւնը Պու-
սէն հետեւեալ տեղեկութիւններ կը հարո-
րէ անգլիական թերթերուն:

«Կառավարութիւնը ձերակալեց Մուշի և
Բաղէի առաջնորդները: Ասոնք ամբաստան-
ուեցան իր գրգռիչ Սպաղաքի կողմը,
ծին մասնակցող Խալիլ Պէլիլի և եղբորը-
ղին սպանութեանը: Օրմանեան պատի-
արը Պալատը և Դուռը խտաւ բողոքելով,
Մուշի առաջնորդը ազատ ձգուեցաւ, իսկ
Բաղէինը օստիկանական հսկողութեամբ Պու-
լին կը բերուի: Պատրիարքը վերստին բո-
ղոքեց առաջնորդի մը նկատմամբ այսպիսի
վարմունքի մը համար:

«Երկրին ներսերէն եկած լուրերը շատ
դէշ են: Տառանդները և զինուորական
ստորջէ մնացորդները հաւաքուելու համար ա-
մենախիստ միջոցներ ի գործ կը դրուին:
Գեղացիները կը բռնադատուին իրենց պարտ-
քին են վերջին բարան իսկ հատուցանելու:
Հակառակ ստիճանին հրամաններուն, բնաւ
ստորջէ գեղում չըղաւ այն գեղերը որոնք
կողորածներու ատեն կորուստներ ունեցած
են, կամ՝ որոնք բնակիչները ձգեց զաղթեր
են: Հետեւաբար թշուառութիւնը ծայրայեղ է»:

Վիեննային Գեկտ. 28 թուական «Տէլի-
ֆրոնիկ»-ի կը հեռագրուի թէ Լըզրուի, Վա-
նի, Պիլիպի խոտիկա վիճակը այնքան ծան-
րացած է որ բարեկարգութիւնը վերահաս-
տատելու համար այլ կողմերը շատ զօրք
զրկելու հարկ տեսնուած է:

ՆՈՐ ԿԵԱՄԻ

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ 4/17 ՆՈՅՄԵՐ.
Կառավարութիւնը վերստին գտել է իր խը-
ստութիւնները: Երկրի վիճակը յիշեցնում
է ճիշդ 1893ի Նոյեմ. և Գեկտ. ամիսները
Քրիստոնեաները ուրբաթ օրերը կէսօրուան
նամազի ժամանակ փակուել են իրենց խա-
նութիւնները և ապատանում են տներում:
Թիւրք ամբողջ բացարձակապէս յայտնում
է, սպասում են իրաւիկ բոլոր բրիտանեա-
ներին շնչելու համար: Միւս կողմից կառա-
վարութիւնը բռնի կերպով ու տուրքի ան-
ւան տակ՝ զրամ է ժողովում, շնայելով որ
ժողովրդի 75 տոկոսը անկարող է օրուան հա-
ցը անգամ Հայթայիւլը: Նահանգի Համարիս

բոլոր գեղերը դատարիւն են, որովհետեւ
այլ գեղերում մայրս խեղճ բնակիչների
մի մասը այժմ բազաք է ապաստանել:
Վանառականի մի նր ամբողջը գաղթել է,
որովհետեւ շրջակաների հետ յարաբերու-
թիւնները կարած են և ոչ ոք չգիտէ թէ
ինչ կարող է լինել վաղը:
Չարագործու-
ւններով և յափշտակութիւններով մասնաւոր
յայտնի են Իբրահիմ փաշա և Մ. Գաստափա
փաշա բողոքը: Ամենայն օր խուսում է նրանց
մասին, թէ այսքան մարդ են կողորել, այն-
քան յափշտակութիւններ են կատարել:
Մի խօսքով՝ զժուար է նկարագրել մեր կա-
ցութեան ծանրութիւնը. մեռնելը մեծ բախ-
տաւորութիւն կը լինէր մեզ համար:
Իրօջակ

ԿՈՒՋԷՔ ԲԱՂԴԵՐՆԻՒ ՓՈՐՁԵԼ

Գնեցէք ժողովրդական Տարեցոյցէն
հաստ մը, ուր շատ մը գուարճակ և
օգտակար հատուածներու հետ կը
զանուի նաև գեղեցիկ բաղդացոյց մը
պէտք եղած բացատրութեամբ:
Սոյն Տարեցոյցէն և Պարզ Օրացոյց
գնել փախաբողք թո՛ղ հաճին զիմե՛
առ Տ. ՕՏան Խնտամեան, որ պատ-
րաստ է ուրիշ ամէն տեսակ գրքերու
մասին յանձնարարութիւնը փութով
կատարել փոքրիկ կանխավճարով մը:
Շրջակայ քաղաքներէն Տարեցոյցի և
Օրացոյցի մնացիլ եղած յանձնարա-
րութեան համար գրամի տեղ լծը՛
լծադրու՛մ կընդունուի:
Տարեցոյցին գինը 10 Ղրշ. ողջ
Պարզ օրացոյցինը 2

ՅԱՌԱՋԻՄՈՒԹԻՒՆԸ
19Գ. ԳԱՐՈՒ ՄԵՂ

Այն պահուն երբ 19րդ դարու վեր-
ջին վայրկեանը կը հնչէ, ու 20րդ
դարը իր գոները կը բանայ մարգ-
կութեան, յառաջդիմութեան առջև,
մարդս տնտր սեմին վրայ կանգնած
պահ մը կը մտածէ թէ ինչ գորու-
մէջ ապրեցաւ, ու ինչ դարու մէջ
պիտի ապրի. թէ յառաջդիմութիւնը
իր առած բայելքով որչափ օգտակար
եղած է մարդկութեան, ու պիտի ըլլայ
անոր՝ ապագային:

Մենք, այս առթիւ, գաղափար մը
տալու համար 19րդ դարուն ըլլած
յառաջդիմական քայլերուն, վաճա-
ռականին ըլլայ մերենաներու ըլլայ
երեքարական տեսակետով, մենք հոս
Ամերիկայի թերթերէն քաղուած հա-
տուած մը մէջ կը բերենք, զոր հա-
ւաքած է Պ. Մ. Մինասեան, «Կոչ-
նակ» ի աշխատակիցը:

Գարուն սկիզբը աշխարհի վաճառակա-
նութիւնը կը հաշուաւոր իբր 1,500,000,000
աղար. իսկ այսօր՝ 20,000,000,000
տոյար: Գարուն սկիզբը աշխարհի բազմա-
մարդութիւնը կը հաշուաւոր 640,000,000
իսկ այսօր՝ 1,500,000,000: Այսպէս
աշխարհի բազմամարդութիւնը աճած է 135
առ հարիւր. իսկ վաճառականութիւնը՝
1,233 առ հարիւր:
Երկրամոզեաց և վաճառականութեան
աճման մասին համեմատութիւն մը բաւա-
կան է ցոյց տալ թէ զուգընթաց եղած են

Միշտ վաճառքներու երկաթուղեաց միջոցաւ փոխադրութիւնը ոչսաւ նախ յԱնգլիա 1825ին, և յԱմերիկա 1830ին: Երբ իբր 200 մլն երկաթուղի միայն կար աշխարհի վրայ, այդ տարուան վաճառականութիւնը՝ ամենէն վստահելի հաշիւներուն նայելով 1,984, 000,000 տլր. էր: 1820ի վաճառականութիւնն էր 1,659,000,000 տլր. տասը տարուան մէջ իբր 17 առ հարիւր յաւելում մը: 1840ին երկաթուղիք եղան 5,420 մլն, և վաճառականութիւնը՝ 2,789,000,000 քառասուն առ հարիւր յաւելում: 1840—1850 երկաթուղիք եղան 67,350 մլն և վաճառականութիւնը՝ 7,246,000,000, եօթանասուն և ինը առ հարիւր աճում: Եւ այսպէս աճեցան մինչև 1898ին երկաթուղեաց գծերուն 442,200 մլն և աւելի երկաթուղիքին, և վաճառականութիւնը կը հասնէր 19,945,000,000: Միակ օրինակ մը բաւական է երկաթուղեաց վաճառականութեան բրած նպատար բացատրել: Հնդկաստան իւր երկը հարիւր միլիոն բնակչօք և 22,000 մլն երկաթուղիքով 25 տարուան մէջ 60 առ հարիւր յաւելում ունեցած է իւր վաճառականութեան մէջ. իսկ Չինաստան իւր չորս հարիւր միլիոն ժողովրդով՝ բայց առանց երկաթուղեաց՝ աճած է իբր 30 առ հարիւր միայն այդ ժամանակին մէջ: Գարուս սկիզբը ծովու վրայի վաճառականական փոխադրութիւնն էր 4,026,000 թօնօ, իսկ 1898—9ին 63,225,000:

Երբ արականութիւնն ալ ամենամեծ նպատակներէն մին եղած է վաճառականութեան: Հետագի շարժիւն այսօր ոչ միայն բաշարի վաճառականը, բայց նաև ցորեն արտադրող ազարակապետը գիտէ այս իրիկուն թէ վաղը առտու ինչ պիտի ըլլայ ցորենին գինը Լոնտոնի կամ ուրիշ կեդրոններու առտրական հրապարակաց մէջ: Արեւելքի կամ Արեցեալ գօտուլ բնակիչը կրնան իրենց ապագանքը ընել այսօր և վտահ ըլլալ թէ վաղը ճամբայ պիտի կրնան դուրս ապրանքներ և այսինչ օրը հասնիլ իրեն: Հեռագրի աճումն ալ զուգընթաց եղած է վաճառականութեան աճման հետ: Առտրական նպատակաց համար առաջին հետագիրը հաստատուեցաւ 1844ին և այնչափ շատ զգացուեցաւ իւր ազդեցութիւն, որ 1850ին հազարաւոր մլնօններ ծածկուեցան հեռագրական թելերով: 1860ին 100,000 մլն երկարութիւն ունէին հեռագիրք: 1870ին 280,000՝ 1880ին 440,000. 1890ին՝ 768,000, և այսօր ամբողջը կը հասնի միլիոնի մը: Չորս տասն կէս առաջին հեռագրութիւնը հաստատուեցաւ 1851ին: 1890ին ամբողջ երկայնութիւնն էր 1,500 մլն. մինչև 1898ին հասաւ 170,000 մլն: Տարին իբր վեց միլիոն լուրեր կը փոխանցուին այս ծովային հեռագրութեանը միջոցաւ. մինչ զամառը վրայ օրական մէկ միլիոն կը հաշուի: Այս հեռագրութեանը հազարգած լուրերուն մեծագոյն մասը առտրական են:

Երբ հանքերու արտադրութիւնը մեծապէս նպաստած են դարուս վաճառականութեան զարգացմանը. ոսկի, հանքածուխ ու երկաթ: Երկաթը կը հաշուէ թէ 1492ին ՝ ամբողջ Երասպայի մէջ գտնուող ոսկեղ բնականութիւնն ունէր 60,000,000 արծողութիւն: Այդ թուականն մինչև դարուս ըսկիզբները աշխարհի ոսկեղ միլիոն արտադրութիւնն էր տարեկան իբր ութը միլիոն տալերի արծողութիւն, 1800ին մինչև 1850՝ տարեկան իբր 15 միլիոն, և այդ թուականն էր շարունակաբար աճած է մինչև այսօր

աշխարհի ոսկեղ տարեկան արտադրութիւնը կը հասնի 300 միլիոնի նման ահագին բնականութեան մը: Այս անմասն աճման արդիւնքը այն եղած է որ աշխարհի վաճառականութեան 95 առ հարիւր կը կատարուի ոսկին ունենալով իբր հիմ առաւարական գործողութեանց: Գարուս սկիզբը հանքածուխի արտադրութիւնն էր 11 միլիոն թօնօ իսկ այսօր՝ 600 միլիոն: Երկաթի տարեկան արտադրութիւնը 460,000 էն աճած է 37 միլիոն թօնօ: Հանքածուխի և երկաթի կարտուրութիւնը ակնհերև է երբ նկատենք թէ շոգիկառք ու շոգինաւ, գործարաններ ու շատ գործիներ անկարելի պիտի ըլլային առանց այս երկու թանկագին հանգրուան: Շոգիկառք շատ անմշակ ու խոպան երկիրներու մշակութիւնն անոնց կարելի բրած է, փոխադրելու միջոցներ հայթայթելով: Երուպայի, Ամերիկայի և Աւստրալիայի մշակելի դաշտերն 360 միլիոն արտադար կին դարուս սկիզբը. իսկ այսօր՝ 900 միլիոն: Աշխարհի բաւական արտադրութիւններ 520 միլիոն փաւնտ իսկ այսօր՝ 5,900 միլիոն:

Այս հաշուով, երեւակայեցէք ուրեմն 20դ. դարու առնելիք յառաջագիմական հսկայ բայելքը:

Ա Ջ Դ

Շատերու կողմէ յայտնուած փափաքի մը գոհացում տալու և մեր ընթերցողներու գիւրտութիւն մը ընծայելու նպատակով, այսուհետև մեր թերթը հատով պիտի ծախուի Շարա Ապտալ-է-Ապիդի սկիզբը Գ. ԿԱՐՍՊԵՏ ԵՐԶՆԿԱՅԵԱՆԻ խանութը ինչպէս նաև Գլխի-Պէյ փողոցի ծայրը և թըրամէլէյներու կայարանին մօտ ծխափաճառ Գ. ՄԱՐՏԻՐՈՍ ԳԱՍՊԵԱՆԻ քով:

Le Gérant J. MUNIER

Տպ. «Միւրիւն».— Թ. Ս. Փափագեանի

ՊԱՆԳ ԼԻՍՆԷԶ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԱԼ ԵԳԻԳՏՈՍԻ
Մ. ՍՕՍՕՅԵԱՆ

Լիոնի հանրածանօթ դրամատունը, այս անգամ ունեցաւ իւր Եգիպտոսի գործակալնալ, Տ. Միլտիլ Սօսյանն, որ իւր հրապարակային ցոյց տուած պարկեշտ գործունէութեամբն ամենուս վստահութիւնը կը վայելէ:

Սոյն գործակալութիւնը, 11 Սեպտ. թիւ իրեն յանձնուած և Լիոնի բաղաքապետութեան պաշտօնապէս վաւերացուած փոխանորդազրի համաձայն, պիտի կատարէ Պանգ Լիոնէզի միջոցաւ ամեն տեսակ դրամական և Գուղիական ամէն արժեթուղիքու գործողութիւններ, գանձումներ: Ամսական չնչին գումարի մը խնայողութեամբ ձեռք կը բերուի քիչ ատենէն, պտհեստի բաժնեթուղի մը, վիճակահանութեամբ երաշխաւորուած:

Փափաքողները հաճին դիմել Նիւպառի վրայ փաստաբան Ռարթաքիի դրասենեակը:

Թղթակցութիւն և կամ դրամ ղըրկել հետևեալ հասցէին:

Մ. ՍՕՍՕՅԵԱՆ
Ի ԳԱՀԻՐԷ

ԱՏԱՄԱՐՈՅԺ
Պ. ՆԻԿՈՂԻՍՏՈՍ

Վերջերս հաստատուած ի Գահիրէ, Գահէ ալ լա Պուրի կից, Բ. յարկ, թիւ 9 դասիկոնը:

Կը բժշկէ բերնի և ակոպի ամեն տեսակ հիւանդութիւնները: Աղքատները ձրի կը դարմանէ ամեն օր, առաւօտեան ժամը 8էն 9:

ՊԵՍԵՄԱՆ-ՇԻՇՄԱՆԵԱՆ ԸՆԿ.
ԱՍԵՐԿԵԱՆ ԴԵՐԱԿԵՐ
ԱՐԱՆ ԵՆ ՅԻՆԱՆՑ
ԵՒ ՁԵՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԴԳՐՈՑ

Ապիքնի մեծ պողոտային վրայ Ցախրայի Սանիթի դիմացը, Եսիկին ելեկտրակոն գործիներու վաճառատներ:

Վերջերս Ամերիկայէն հօս եկած հաստատուած ըլլալով կը յայտարարենք արգոյ հասարակութեան թէ՛ պատրաստ ենք գոհացնել մեզ գիմոյ Պատ. յաճախողները, գործի մաքրութեան, գիներու չափաւորութեան և ճշգրտագնութեան կողմէն:

Մեր գործատեղոյն մէջ կ'աւանդուին նաև ձևագրութեան գասեր ամերիկեան ամենավերջին կատարելագործուած մէթոտով:

Մանրամասնութեանց համար գրքի մեր գործատեղին:

ՃԱՅՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ

ՄԻՀՐԱՆ ԵՒ ԵՂՐ. ԳԱՉԱՆՃԵԱՆ
Շարա Ապտալ-Սապահ
Նիւտ. Տնիկերսի դեղատանին դիմացը:

Օգտատն ու զուարճալի գիրք մաքուր ու վայելուչ սպաս. համեղ ու մենդարար կերակուրներու զանազանութիւնն, անխարգախ պատրաստութիւն. ճիս ճաշացուցակ մը գիրք մատչելի գիներով ահա՛ Գաղանձեան եղբարց ճաշարանը:

Ով որ կ'ուզէ, փորձի համար մէկ անգամ թող դիմէ, վրասն պէտք է ըլլայ թէ մշտակայ յաճախողը պիտի դառնայ հայկական ճաշարանին:

Տ Պ Ա Ր Ա Ն
Մ Ի Մ Մ Մ Մ Մ Մ Մ
Ի ԳԱՀԻՐԷ
ԱՊՏԻՆ ՓՈՂՈՑ, ՄՈՒԳԱԹՅԱՄԻ ՃԻՇԴ ԴԻՄԱՑ
ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
ԹՈՐԳՈՄ Ս. ՓԱՓԱՉԵԱՆ
Սոյն նորակազմ տպարանին մէջ կը տպուին հայերէն ու եւրոպական լեզուաւ ամեն տեսակ հրատարակութիւններ, պարբերական թերթեր, յայտարարութիւններ, շրջաբերականներ, այցետուներ, մահազգեր, հարանեաց հրաւիրագրեր, կանոնագիրներ, նամակազրուիւններ, պահարաններ, հաշուեցուցակներ ևն:
Յանձնարարութիւններ կը կատարուին փոքրով, ամենայն խնամօք եւ ճաշակատր տպագրութեամբ:
ՉԱՓԱԻՈՐ ԳԻՆԵՐՈՎ